

յորժամ տեսանէին զմեծարանսն<sup>1</sup> եւ զւեր թագաւորին Պարսից, տիկինն Չարմանդուխտ եւ սպարապետն զաւրավարն Յայոց Մանուէլ մեծաւ խնդութեամբ մեծարէին զՍուրբէն: 12 Տային զաշխարհն Յայոց ի ձեռն Սուրենայ, եւ հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. եւ կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Յայոց հարկս՝ տալ ընծայս եւ պատարագս: 13 Սոյնպէս եւ մարզպանին Սուրենայ հասս եւ կաւշիկս եւ զպիտոյս<sup>2</sup> զռոճկացն. սոյնպէս եւ տասն հազարացն դարման եւ կերակուր ըստ պիտոյիցն: 14 Եւ սրտի մտաւք արարին իւրեանց թիկունս. եւ տեր գտեալ իւրեանց զարքայն Պարսից, եւ կային ի ծառայութեան նորա. եւ ստեպ ստեպ դեսպանք թագաւորին Պարսից երթային եւ գային յերկիրն Յայոց. եւ մեծապէս զմտերմութիւն միամտութեանն, որ էրն, ցուցանէին թագաւորին. եւ ստեպ առաքէր պարգեւս տիկնոջն Չարմանդիտոյն. սոյնպէս եւ զաւրավարին Յայոց Մանուէլի: 15 Յոյժ մտերիմ եւ սիրելի լինէր Մանուէլ թագաւորին Պարսից եւ մեծապէս փառաւորեալ աւագանայր ի նմանէն: 16 Եւ Մերուժանն Արծրունի իբրեւ տեսանէր զայն ամենայն փառս աւագութեան, որովք շքեղացոյց զՄանուէլ արքայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս պատուեաց զնա, յոյժ նախանձեր նա ընդ փառսն Մանուէլի. եւ խնդրէր նա հնարս հնարել, հանել զնա յաչաց թագաւորին Պարսից, զի փոխանակ նորա ինքն լիցի սիրելի: 17 Եւ իբրեւ այլ հնարս ինչ ոչ կարէր գտանել դուրս նենգութեանցն առ Պարսիկս, ընդ որ մտցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար, եւ կեղծաւորութեամբ իւրով զգործ իւր յառաջացոյց: 18 Չի իբրեւ նա յեցաւ ի միամտութիւն զաւրավարին Մանուէլի, սկսաւ նախ հպատակութեամբ զմիտսն գողանալ, նախ մտերմութեամբ հաճել զմիտս նորա. ապա զանձն իւր հոգածու եւ ինսամակալ երեւեցուցանէր նմա. ապա եկեալ գուշակութիւն առնէր նմա սուտ ի քմաց իւրոց՝ թէ Գիտասջիր դու, ո՛ր Մանուէլ, զի դեսպան լեալ է յարքայէն Պարսից. յաղագս քո բերեալ ունին հրաման առ Սուրբէն, զի զքեզ կալցին կապեցցեն. կամ աստէն սպանցցեն, կամ ոտիւք եւ ձեռաւք եւ պարանոցաւ կապելով մեծաւ զգուշութեամբ տանել առ թագաւորն Պարսից. արդ դուն գիտա՛, տե՛ս խորհեաց ընդ միտս քո թէ զի՛նչ գործեցցես: 19 Եւ եղև յորժամ լուաւ զայս Մանուէլ, կայր զարմացեալ հիացեալ ընդ միտս իւր. եւ ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ Պարսիկս, է՛ր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ: 20 Եւ ասէ Մերուժանն ցՄանուէլ. Ես ճշգրտեցի եւ հաստատեցի, զի իրքդ այդ ստոյգ են. մեծաւ սիրով եւ հոգաբարձութեամբ գուշակ եղէ քեզ: 21 Իսկ իբրեւ հաւատաց բանին Մերուժանայ Մանուէլն, եւ կարծեաց ի միտս իւր՝ թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, եւ զաւր բա-

1 *Ի չորս օրինակս՝ զմեծաբանսն. ի միումն՝ զմեծամեծսն. մեզ այսպէս ուղղելի թուեցաւ.*

2 *Յամենայն օրինակս՝ զպիտոյս ռոճկացն*